Մեծութիւնքը բարեհաճեցին վերադառնալ պալատը, որ տեղ պատրաստուած էր ընտանեկան ճաշ և որը վերջացաւ 9½ ժամին։ Ճաշի ժամանակ (Старокладбищенская гора) հին գերեզմանատան բլուրը, որ պալատից հիանալի տեսարան էր ներկայացնում՝ զարդարուած էր գոյնզգոյն լապտերներով։ Ներկայ լինողները հեռուից տեսնում էին հրային սիւն և հրեղէն կամարների երկար կարգ, որոց մէջ երևում էին վառուած կայսերական անուանց գլխագրերը Ա և Մ. պսակուած Կայսերական թագերով։ Հրավառութեան ժամանակ լսվում էին պայթումներ և ամեն մի պայթումից յետոյ՝ օդը ծածկւում էր գոյնզգոյն աստղերով՝ լուսաւորելով մօտակայ սարերը մեծ տարածութեան վերայ։ Բաղուին շրջապատող հարաւային կողմից բոլոր մօտակայ բլուրները և նոյնպէս «Նարգիս» կղզին խորասուզված էին կրակների մէջ, լուսաւորուած նաֆթային և գազային կրակներով 12 վերստ տարածութեամբ։ 9½ ժամին Նորին Կայսերական Մեծութիւն թագուհին ուղեկցութեամբ թագաժառանգի և մեծ իշխան Գէորգի Ալէքսանդրովչի և բազմաթիւ շքախմբով ժամանեց Սուրախանի։ Սուրախանում Կայսերական կառքը կանգնեց քիչ հեռու կռատան աշտարակից, որի մօտ դիտմամբ շինուած և զարդարուած էր պատշգամբը պարսկական ճաշակով։ Կռատան աշտարակը ամբողջովին վառվում էր, լուսաւորելով շրջակայքը մեծ տարածութեան վրայ։ Հազիւ թէ Կայսերական կառքը մօտեցաւ պատշգամբին, ամբոխը՝ որը հաւաքուած էր մօտակայ գիւղերից, Ամիրջանից, Բալբուլից, և Սուրախանից, Մաշտագից, և Բզովնայից, կոչեցին «Ուռա»։ Կայարանի պատշգամբի վերայ Նահանգապետի կին Բոգդէն ընդունեց օգոստափառ ընտանիքը և պատիւ ունեցաւ մատուցանել ծաղկի մի փունջ, իսկ Պ. Բաշկերովը և կինը ունեցան մեծ պատիւ մատուցանել թագաժառանգին մի ալբոմ, հնգկաց մենաստանի և Սուրախանի գոլծարանների տեսարաններով։

Օգոստափառ հիւրերը ընդունելով ընծաները, բարեհաճեցին այցելել մենաստանը և խուցերը, կառավարչապետից լսելով մեկնութիւնները։ Վերջացնելով տեսութիւնը Նորին Մեծութիւն Կայսերուհին և Նոցին Մեծութիւնք ուղևորուեցին